ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 Նոյեմբերի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

167
(2833)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԵՆ ՀՐԱՎԻՐԵԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ԲԴԽ նախկին նախագահ Ռուբեն Վարդազարյանը կրկին հրավիրվել է Հակակոռուպցիոն կոմիտե եւ հարցաքննվել: Սա այս տարվա մեջ երկրորդ անգամ է, ինչ Վարդազարյանը հարցաքննվում է Հակակոռուպցիոն կոմիտեում: Հիշեցնենք, որ 2022թ. հունիսի 20-ին Ռուբեն Վարդազարյանը հրավիրված ասուլիսում աղմկահարույց ձայնագրություն էր հրապարակել, որով հիմնավորվում էր, որ ԲԴԽ նախագահի պաշտոնակատար Գագիկ Ջհանգիրյանը փորձել է պարտադրել Վարդազարյանին հրաժարական տալ: Աղմկահարույց զրույց-պահանջը տեղի էր ունեցել ընթրիքի սեղանի շուրջ, որին ներկա են եղել ոչ միայն Վարդազարյանն ու Ջհանգիրյանը, այլ նաեւ ԲԴԽ անդամ Ստեփան Միքայելյանը: Հրապարակված ձայնագրությունից հասկանալի էր, որ Վարդազարյանին վարչապետի անունից առաջարկվել է հրաժարական տալ, իսկ Ջհանգիրյանն էլ ստանձնել է միջնորդի դեր՝ երաշխավորելով, որ նրա նկատմամբ հետապնդումներ չեն իրականացվի, եթե հրաժարական ներկայացնի: Ջհանգիրյանը հանրայինի եթերում անձամբ խոստովանել է, որ բանակցություններ իսկապես վարել է Վարդազարյանի հետ հրաժարական տալուն տրամադրելու համար: Ավելին՝ վերջինս հայտարարել է, որ ԲԴԽ նախագահին հրաժարական պարտադրելն այնքան էլ հեշտ գործ չէ, ու ինքը հոգեբանական հնարքներ է կիրառել, «կուտ տվել»: Աղմկահարույց ձայնագրությունից եւ առավել անհասկանալի հարցազրույցից օրեր անց հայտարարվեց, թե Գագիկ Ջհանգիրյանն ունի առողջական խնդիրներ եւ ենթարկվել է վիրահատության: Ակնառու էր, որ Ջհանգիրյանը այդ խայտառակ ձայնագրությունից հետո առողջական խնդիրների քողի ներքո պատրաստվում էր հրաժարական տալ: Եւ, ահա, հուլիսի 1-ին արդեն պաշտոնապես հաստատվեց Ջհանգիրյանի հրաժարականը: ՀՀ քննչական կոմիտեում նշված ձայնագրության կապակցությամբ նախապատրաստված նյութերով նախաձեռնվել էր քրեական վարույթ, որը դեկտեմբերին կարճվել էր՝ հանցանքի բացակայության հիմքով: ՔԿ-ում վկայի կարգավիճակով վարույթի շրջանակներում հարցաքննվել են նաեւ ԲԴԽ արդեն նախկին անդամներ Ստեփան Միքայելյանը, Սերգեյ Չիչոյանը եւ ԲԴԽ անդամ Վիգեն Քոչարյանը: Ընդ որում՝ վերջին երկուսի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու որոշում էր կայացվել: Նշված որոշման դեմ Վարդազարյանը բողոք էր ներկայացրել, սակայն մինչ բողոքը կստացվեր, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արթուր Պողոսյանը սեփական նախաձեռնությամբ վերացրել էր քննիչի որոշումը՝ ըստ քննչական ենթակայության գործը Հակակոռուպցիոն կոմիտե ուղարկելու որոշում կայացնելով: Միեւնույն ժամանակ դատախազն արձանագրել է, որ նախաքննության ավարտ հայտարարելուց հետո ժամկետները չեն պահպանվել, քանի որ ավարտ հայտարարելու մասին տեղեկացնելուց հետո քննիչը ժամանակ չի տրամադրել բողոքարկման համար: Վարույթը Հակակոռուպցիոն կոմիտե տեղափոխվելուց հետո փաստացի սառեցված վիճակում պահվել է երեք ամիս, ապա՝ կարճվել՝ հանցանքի բացակայության հիմքով: Գործի վարույթը կարճելու որոշումը դատական կարգով վիճարկվել է: Արդյունքում Հակակոռուպցիոն դատարանը՝ դատավոր Մերի Մոսինյանի նախագահությամբ, բավարարել է Վարդազարյանի ներկայացուցիչների բողոքը՝ վերացնելով գործի վարույթը կարճելու որոշումը: Դատական ակտը չի վիճարկվել ոչ դատախազության, ոչ քննիչի կողմից, ըստ այդմ՝ դատական ակտն օրինական ուժի մեջ է մտել: Այժմ վարույթը վերսկսվել է:

ՀՀ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արման Եղոյանը մինչ պաշտոնապես քաղաքական արենա գալը՝2010-2013 թվականներին, աշխատել է ՀՀ մշակույթի նախարարության պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության գործակալությունում: Եղել է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող: Քաղաքական դաշտ է եկել 2018 թվականի հեղափոխությունից հետո, ինչպես խմբակցության անդամներից շատերը: Ըստ 2022 թվականի հաշվետու տարվա եկամուտների եւ անշարժ գույքի մասին հայտարարագրի՝ Եղոյանը 2020 թվականին ձեռք է բերել միանձնյա սեփականությամբ հողամաս Տավուշի մարզի Դիլիջան համայնքում: 2021 թվականին ժառանգություն է ստացել բնակարան Երեւանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բազմաբնակարաններից մեկում: 2021 թվականի գրեթե նույն ժամանակահատվածում ժառանգություն է ստացել ավտոտնակ, սակայն Եղոյանը տրանսպորտային միջոց չի հայտարարագրել: Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 3 մլն 906 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները կազմել են 150 հազար դրամ: Եղոյանի՝ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 26 մլն 443 հազար դրամ, որից 9 մլն 519 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմից: Եղոյանը հաշվետու տարվա եկամուտներում նշել է նվիրատվություն 1 մլն 200 հազար դրամ, իսկ եկամտի աղբյուրը նշել է՝ «հարսանիքի հյուրերի կողմից»: Նա նվիրատվություն է ստացել նաեւ 900 հազար դրամ, որը Նոնա Աշոտի Եղոյանի կողմից է: 1 մլն 697 հազար դրամը նվիրատվություն է Նելլի Սեդրակի Սիմոնյանի կողմից: Եղոյանը ժառանգության կարգով ստացել է 1 մլն 697 հազար դրամ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



Նոյեմբերի 24-ին Երեւանի շախմատի ֆեդերացիայի նոր նախագահի ընտրություններ տեղի կունենան: Թեեւ ֆեդերացիայի նախագահի ընտրություններին հաշված օրեր են մնացել, բայց թեկնածուների շուրջ դեռ ակտիվ խմորումներ են գնում: Այժմ Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահի պաշտոնը զբաղեցնում է իմքայլական նախկին պատգամավոր, Սփյուռքի նախկին նախարար Մխիթար Հայրապետյանը. նա Շախմատի ֆեդերացիայի նախագահի պաշտոնում ընտրվել է 2019թ.-ի հոկտեմբերին: Մինչ այդ ֆեդերացիայի նախագահը ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանն էր: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ֆեդերացիայի նախագահի նոր ընտրություններին Մխիթար Հայրապետյանը չի պատրաստվում առաջադրվել, փոխարենը իր թեկնածությունը կառաջադրի ԱԺ իշխանական նախկին պատգամավոր, որի անունը հայտնի կդառնա առաջիկայում: Իշխանությունները փնտրում են ազդեցիկ, միջոցներ հայթայթող կերպար, որպեսզի կարողանա ֆեդերացիայի մշտապես մեծ պահանջները բավարարել: Հիշեցնենք, որ հեղափոխությունից հետո շախմատի աշխարհի չեմպիոն Լեւոն Արոնյանը անվերադարձ հեռացավ Հայաստանից:

Հայաստանում մրցակցային միջավայր ձեւավորելու եւ պաշտպանելու պետական հանձնառություն ունեցող կառույցը խախտում է մրցակցային կանոնները: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական փաստաթղթերից տեղեկացավ, որ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը մեկ անձից գնումներ կատարելիս բավականին ակտիվ է: Այդ կառույցի համար մերժելի սկզբունքով, օրինակ, այս տարվա օգոստոսին գնվել է 26 հատ օրատետր՝ մեկի համար վճարելով վեց հազար դրամից ավելի գումար, ընդհանուր՝ 163 հազար դրամ: Մյուս պայմանագրով կրկին մեկ անձից գնման ընթացակարգով կառույցն այս տարվա ընթացքում ծախսել է 934 հազար դրամ եւ կրկին գնել նոթատետրեր, օրացույցեր եւ այլ գրենական պիտույքներ: Օրինակ՝ տպագրված գրիչներ գնելու համար կառույցը վճարել է 47 հազար դրամ, թղթապանակի համար՝ 55 հազար դրամ, իսկ, ահա, 50 օրացույց գնելու համար՝ 295 հազար դրամ: Իհարկե, պետական կառույց է, թուղթ ու գրիչի՝ թեկուզ տարբերանշանով գրիչի կարիք, բնականաբար, ունի, բայց այս երեւույթի մեջ ամենազավեշտալին այն է, որ հենց Գեղամ Գեւորգյանի ղեկավարած կառույցը մեր երկրում պետք է մրցակցային միջավայրը պաշտպանի, բայց խախտում է հենց ինքը: Մեկ անձից կատարված գնումը նշանակում է, որ այլ ընկերություններ չեն կարող մասնակցել պետական մատակարարման մրցույթին, մինչդեռ Գեղամ Գեւորգյանի գլխավորած ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ՏՄՊՊՀ) նպատակն է պաշտպանել եւ խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը եւ սպառողների շահերի պաշտպանությանը ՀՀ-ում: Փաստորեն, անգամ մրցակցային միջավայրի պատասխանատու մարմինը չի պահպանում մրցակցային միջավայրը:

ՊԱՐՔԱԲԱՆԵՑ

ԻՆՉՈ՞Ւ ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՍԿՍԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սոնա Աղեկյանը անդրադարձել է նախօրեին իր եւ «Հանրապետություն» խմբակցության ղեկավար Անի Խաչատրյանի մասնակցությամբ վեճին:

-Տիկին Աղեկյան, ըստ էության, քաղաքապետարանում օրեր առաջ տեղի ունեցած քաշքշոցը, հրմշտոցը սկսվեց Ձեր եւ Անի Խաչատրյանի վեճից: Տեսանյութերը տարածվեցին ողջ մամուլում: Ի՞նչ բնութագիր կտաք, ի՞նչ դիտարկումներ եք արել: Ըստ Ձեզ՝ ովքե՞ր էին մեղավորները:

-Երեւանի ավագանին ընտրովի մարմին է, որն ունի վերահսկողական լիազորություններ, եւ մենք այստեղ եկել ենք, որպեսզի մեր վերահսկողական լիազորություններն ի գործ դնենք՝ ի շահ երեւանցու: Այս մեկ ամսվա ընթացքը, որի ժամանակ մենք հասկանալի պատճառներով չենք մասնակցել, որը բացատրել ենք մեր հայտարարություններում, կազմակերպել ենք Երեւանի տարբեր վարչական շրջանների հանդիպումներ եւ լսել ենք քաղաքացիներին, որպեսզի իրազեկ լինենք Երեւան քաղաքում առկա խնդիրներին:

Այդ օրը առաջին անգամ էինք մենք նիստի մասնակցում: Ի դեպ, չզեկուցվող հարցերը մեր պահանջով ու պարտադրանքով դարձան զեկուցվող, եւ մենք մասնակցեցինք օրակարգի քննարկմանը: Այս ընթացքում քաղաքական ելույթներ էին հնչում, եւ այդ ելույթների շրջանակում փորձում էին հնարավորինս իրենց մակարդակին հասցնել «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավարին եւ «Մայր Հայաստան» դաշինքի առաջնորդին: Իրենք, կարծում եմ, որ պետք է գիտակցեին. ավագանու կարգավիճակով աշխատող մարդը պարտավոր է գիտակցել իր հայտարարությունների արձագանքը եւ պատրաստ լինել դրան: Ես, բնականաբար, պատասխանեցի՝ ասելով, որ այն ուժին եք սատարում (պետք է նշեմ, որ Ձեր նշած անձն այդ օրը վաղ առավոտից ստանձնել էր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության փաստաբանի դերը, եւ ես նրան պարզապես հիշեցրի, որ նման լավ փաստաբանություն կարող էիք անել ադրբեջանցիների մոտ), որոնք թույլ են տվել անմարդկային վարք դրսեւորել Վազգեն Սարգսյանի արձանի նկատմամբ Շուշիում: Ես իրականությունը հիշեցրեցի եւ հավելեցի, որ իրենց գնահատականներում զգույշ լինեն, ինչին ի պատասխան՝ նա արձագանքեց՝ իբրեւ թե վիրավորելով:

-Իսկ երբ նիստերից առաջ ասում էիք, որ գալու եք եւ նրանց կյանքը դժոխքի վերածեք, սա՞ նկատի ունեիք:

-Ես կոնկրետ ի նկատի եմ ունեցել ՔՊԿ-ի մասին իրենց դրածո եւ արբանյակ կուսակցությունների հետ միասին, որոնք փորձում էին շեղել ուշադրությունը: Իհարկե, վարչական շրջանի ղեկավարները, այդ անօրենությունները ցույց տալով, նորից հետ բերեցին ՔՊԿ-ի դաշտ:

Զրուցեց ԳՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԱԼԻԵՎՆ ՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը Հայաստանի հետ խաղաղության պայմանագրի ստորագրման խոչընդոտներ չի տեսնում: Այս մասին նա հայտնել է Միացյալ Թագավորության Արտաքին գործերի գրասենյակի խորհրդարանական կապերի Համագործակցության եւ զարգացման գծով պետական քարտուղարի տեղակալ Լեո Դոկերտիի հետ հանդիպման ժամանակ. հայտնում է ԱՊԱ-ն: Նա ընդգծել է, որ Ադրբեջանը «պաշտպանում է տարածաշրջանային խաղաղ օրակարգը, պատրաստ է երկխոսության Հայաստանի հետ խաղաղության պայմանագրի ստորագրման եւ երկու երկրների միջեւ հարաբերությունների կարգավորման համար»:

ՈՎՔԵ՞Ր ԷԻՆ ՀԱՅՀՈՅՈՂ ԿԱՆԱՅՔ

Երեւանի ավագանու հերթական նիստի ժամանակ վեճ ծագեց «Հանրապետություն» խմբակցության ղեկավար Անի Խաչատրյանի եւ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սոնա Աղեկյանի միջեւ: Անի Խաչատրյանը փորձում էր պատասխանել Մանուկ Սուքիասյանին՝ մեջբերելով Սուքիասյանի կենսագրությունը եւ քաղաքական ներկան եւ անցյալը: Խաչատրյանը անդրադառնալով նաեւ «Մայր Հայաստան» խմբակցությանը՝ նրանց ղեկավարին թամադա անվանելով: Կցկտուր խոսքի ընթացքում, որը իրենից սուր ելույթ պիտի ենթադրեր, Անի Խաչատրյանը հուզմունքից շփոթվում է, որից հետո դահլիճից բղավեցին. «Գոնե անգիր արած գայիր, տիկին»:

Անի Խաչատրյանը, չլսելու տալով, փորձեց շարունակել, սակայն միջամտեց նաեւ Սոնա Աղեկյանը: Խաչատրյանը Աղեկյանին անվանեց «կոյուղաջրերի թագուհի», ապա Աղեկյանը Խաչատրյանի վրա ջուր լցրեց, ինչից հետո էլ սկսվեց քաշքշուքը: Խաչատրյանը, իբրեւ պատասխան, ջուրը լցրեց Աղեկյանի վրա, ապա սկսեց քաշել մազերից:

Ամենաթեժ պահին Ավինյանը հրահանգեց անջատել միկրոֆոնները եւ ուղիղ միացումը: Այս ընթացքում վեճին միացավ նաեւ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Նարինե Հայրապետյանը՝ նույն ինքը Նարե Սոսեն: Ավագանու անդամների եւ ոստիկանների օգնությամբ դահլիճից փորձեցին դուրս հանել Անի Խաչատրյանին, իսկ Հայրապետյանը ամենավերջին հայհոյանքներով ճանապարհեց նրեն: Խաչատրյանը չհանդուրժելով սկսեց վիրավորել Հայրապետյանին:

Ինչպես արդեն պարզ դարձավ հետո, կռիվը շարունակվել էր նաեւ քաղաքապետարանի միջանցքներում:

Հավելենք նաեւ, որ Երեւանի քաղաքապետարանի միջադեպին ոստիկանությունը ընթացք է տվել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ խուլիգանության հատկանիշով քրեական վարույթ է նախաձեռնվել, եւ այս պահին գործը գտնվում է ՀՀ քննչական կոմիտեում:

ԱՄՓՈՓԻՉ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը հաջորդ ամիս՝ դեկտեմբերին, ամփոփիչ քաղաքական ժողով կանի՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ: Այն կուսակցության արդեն 3-րդ քաղաքական ժողովն է: Այս օրերին «Քաղաքացիական պայմանագրում» նախապատրաստական աշխատանքներ են ընթանում. քննարկվում են քաղաքական ժողովի անցկացման օրվա, տեղի եւ օրակարգի հետ կապված հարցեր: Նշենք, որ կուսակցության քաղաքական ժողովին մասնակցում են կուսակցության վարչության անդամները, կառավարության անդամները՝ նախարարներ, փոխվարչապետներ, Ազգային ժողովի նախագահը, նրա տեղակալները, հանձնաժողովի նախագահները, տարածքային կազմակերպությունների ղեկավարներ եւ համայնքի ղեկավարներ, ինչպես նաեւ հրավիրյալ անձինք, որոնց կորոշի վարչությունը:

ՄԻՋՆՈՐԴՆԵՐԸ՝ ԵՐԵՎԱՆԻ ՈՒ ԲԱՔՎԻ ՄԻՋԵՎ

«Սեպտեմբերին, հոկտեմբերին եւ նոյեմբերին հայկական կողմին առաջարկներ են ուղարկվել բանակցություններ վարել ինչպես Մոսկվայում, այնպես էլ բազմակողմ միջոցառումների շրջանակում, որոնց հստակ պատասխաններ դեռ չենք ստացել: Ինչպե՞ս կարող է անհայտ լինել, երբ ես նոր եմ ներկայացրել փաստերը»,- հայտարարել է Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան՝ մեկնաբանելով Հայաստանի Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի հայտարարությունը, թե ինքը տեղյակ չէ Երեւանի եւ Բաքվի միջեւ խաղաղության պայմանագրի կնքման Մոսկվայի առաջարկներին:

«Միեւնույն ժամանակ, Երեւանը ցանկանում է բանակցել Վաշինգտոնում եւ Բրյուսելում, թեեւ ո՛չ ԱՄՆ-ն, ո՛չ ԵՄ-ն չեն կարող համարվել բարեխիղճ միջնորդներ մի շարք պատճառներով: Նրանց գործողությունները ստորադասվում են Ռուսաստանին Հարավային Կովկասից հեռացնելու նպատակին, նրանք ցանկանում են ոչնչացնել տարածաշրջանում գոյություն ունեցող անվտանգության մեխանիզմները եւ միեւնույն ժամանակ անամոթաբար գողանալ եւ փոփոխել Մոսկվայի մասնակցությամբ ձեռք բերված եռակողմ պայմանավորվածությունները՝ պատեհապաշտ նկատառումներին համապատասխան:

Ուստի նրանց միջնորդությունից իրական օգուտ չկա, չի էլ կարող լինել, քանի որ լիցքն այլ է, նպատակը՝ այլ...

Երեւանի անխոհեմ խաղադրույքը, որ Արեւմուտքը կօգնի իրենց, ֆիասկո է ապրել: Սա նույնպես ակնհայտ է: Սա չտեսնելն անհնար է: Չնայած առկա առաջարկներին եւ հրավերներին՝ խաղաղության պայմանագրի շուրջ բանակցությունները դեռեւս սառեցված են»,- նշել է նա:

ՀՐԱԴԱԴԱՐ՝ ԳԵՐԻՆԵՐԻ ԴԻՄԱՑ

2023 թվականի հոկտեմբերի 7-ից սկսված եւ 1 ամիս եւ 2 շաբաթ ձգվող Իսրայել-Պաղեստին հակամարտությունը նվազեցրել է տեմպերը, սակայն ավարտը դեռ մոտ չէ:

Իսրայելի մայրաքաղաք Երուսաղեմում բնակվում է շուրջ 3 հազար հայ՝ հիմնականում արհեստավորներ, բժիշկներ, ձեռնարկատերեր, հոգեւորականներ, մտավորականներ:

Այստեղ է գտնվում Երուսաղեմի հայոց պատրիարքությունը՝ Սրբոց Հակոբյանց վանքով ու վանքապատկան կալվածքներով, հայկական տպարանով: Գաղտնիք չէ, որ պատմական ամենադժվար փուլում եկեղեցին եղել է ժողովրդին համախմբող եւ ապաստան տվող կառույցը:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Միաբանության անդամ Տեր Էմմանուել վարդապետ Աթաջանյանի հետ, որը մեզ հետ զրույցում խոսել է պատերազմական իրավիճակում հայ եկեղեցու գործունեության մասին:

Հիշեցնենք, որ պատերազմական գործողությունները ընթանում էին Գազայի հատվածում, որտեղ «Համաս» խմբավորման զինյալները ամենադաժան ձեւով մորթում եւ սպանում էին Գազայի բնակիչներին: Քանի որ, բացի Գազայից, հրետակոծվում են նաեւ Իսրայելի այլ քաղաքներ եւս, «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է հայ իսրայելաբնակ Մաքսիմ Սարգսյանի հետ, որը նախկինում Հայաստանում քաղաքացիական ակտիվիստ է եղել: Նա մեզ պատմեց, որ հրետակոծության տեմպը նվազել է, սակայն պատերազմին սկսել է միջամտել նաեւ Լիբանանը:

Հավելենք նաեւ, որ Իսրայելը եւ «Համաս» խմբավորումը համաձայնության են եկել եւ որոշել ամեն 10 գերու դիմաց 1 օր հրադադար հայտարարել:

ՆԻՍՏԻՆ ՉԵՆ ՄԱՄՆԱԿՑԻ

Կրեմլը ցավում է, որ Հայաստանը բարձր մակարդակով չի մասնակցի Մինսկում կայանալիք ՀԱՊԿ գագաթնաժողովին. այս մասին ասել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը:

«Իհարկե, կարող ենք ափսոսանք հայտնել, որ Հայաստանը վաղը բարձր մակարդակով չի մասնակցի այս գագաթնաժողովին: Հուսով ենք, որ կլինի աշխատանքային, փորձագիտական մակարդակով մասնակցություն, բայց, իհարկե, ակնկալում ենք, որ Հայաստանը կշարունակի իր աշխատանքը կազմակերպության շրջանակում»,- ասել է նա լրագրողներին:

Ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը չի մասնակցելու ՀԱՊԿ շրջանակներում Մինսկում կայանալիք հանդիպումներին: Հայաստանի արտգործնախարարության ղեկավար Արարատ Միրզոյանը Բելառուսի իր գործընկեր Սերգեյ Ալեյնիկի հետ հեռախոսազրույցում նույնպես ավելի վաղ ասել էր, որ չի կարողանա մասնակցել ԱԳ նախարարների խորհրդի համատեղ նիստին: Երեկ այս մասին նշեց նաեւ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը:

ՊԱՏԱՍԽԱՆ

ՀՀ ԱԳՆ-Ի ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հայկական կողմը, եւս մեկ անգամ վերահաստատելով Հայաստանի խաղաղական կամքը՝ ջանքեր գործադրելու Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման եւ Հարավային Կովկասում խաղաղության եւ կայունության հաստատման ուղղությամբ, նոյեմբերի 21-ին ադրբեջանական կողմին է փոխանցել հարաբերությունների կարգավորման մասին համաձայնագրի իր՝ թվով 6-րդ խմբագրությունը: Այդ մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են ՀՀ ԱԳՆ-ից:

«Հարկ ենք համարում հիշեցնել, որ մինչ Հայաստանն ադրբեջանական վերջին առաջարկները ստանալուց հետո դիտարկում էր դրանք եւ պատրաստակամ էր շարունակել պայմանագրի նախագծի շուրջ բանակցությունները՝ չնայած ԼՂ-ում ծանր շրջափակման հետեւանքով օրեցօր սրվող մարդասիրական ճգնաժամին, Ադրբեջանը սեպտեմբերի 19-ին լայնածավալ ռազմական հարձակում իրականացրեց Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ, որը հանգեցրեց ԼՂ ողջ հայ բնակչության բռնի տեղահանման:

Հաջորդիվ, շարունակելով բացահայտ կերպով արհամարհել խաղաղության գործընթացին վերադառնալու հնարավորությունը եւ այդ ուղղությամբ միջազգային գործընկերների ջանքերը, ադրբեջանական կողմը չմասնակցեց նախ Եվրոպական քաղաքական համայնքի շրջանակներում Գրանադայում, ապա Բրյուսելում երկրների ղեկավարների մակարդակով հանդիպումներին, թեեւ այդ հնգակողմ եւ եռակողմ հանդիպումները նախապես համաձայնեցված էին:

Հայկական կողմը շարունակել է աշխատանքները համաձայնագրի տեքստի շուրջ եւ առավել արդյունավետ է համարել դրանք ներկայացնել Ադրբեջանին հենց ենթադրվող հանդիպումների ընթացքում: Այնուամենայնիվ, բանակցային գործընթացը փակուղի մտցնելու եւ մեր տարածաշրջանում տեւական խաղաղության հասնելու փորձերը կանխելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը կառուցողականորեն փոխանցել է համաձայնագրի վերաբերյալ իր դիտարկումները եւ, ինչպես բազմիցս նախկինում, ապացուցել է, որ պատրաստ է կրկին ներգրավվել բանակցություններում՝ որպես ուղենիշ ունենալով՝

- միմյանց տարածքային ամբողջականության՝ առանց երկիմաստությունների փոխադարձ ճանաչումը եւ հարգումը,
- համաձայն Ալմա-Աթայի հռչակագրի եւ խորհրդային ամենաթարմ լեգիտիմ քարտեզների հիման վրա՝ հետագա սահմանազատման գործընթացի իրականացումը.
- պետությունների ինքնիշխանության ու իրավազորության լիակատար հարգման եւ հավասարության ու փոխադարձության սկզբունքների հիման վրա տարածաշրջանի ենթակառուցվածքների ապաշրջափակումը:

Հավելենք, որ հայկական կողմը շարունակում է կարծել, որ չնայած բոլոր բարդություններին եւ մարտահրավերներին՝ կա երկու երկրների միջեւ խաղաղության հաստատման իրական հնարավորություն, որը կարող է իրացվել երկուստեք քաղաքական կամքի առկայության պարագայում: Հայկական կողմը շարունակում է դրսեւորել այդ կամքը: Այդ կամքի արտահայտություններից է նաեւ այն, որ Հայաստանն Ադրբեջանին առաջարկել է սահմանազատման հանձնաժողովների նիստ անցկացնել երկու երկրների միջեւ պետական սահմանին»,- ասված է հայտարարության մեջ:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԸ ՀԱՅՏՆՈՒՄ Է

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի աշխատակիցները պարբերաբար այցելում են Ադրբեջանում ապօրինի պահվող հայերին: Ինչպես հաղորդում է ԱՊԱ-ն, այս մասին երեկ՝ Նախիջեւանում կայացած սեմինարի ժամանակ, լրագրողներին ասել է Ադրբեջանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ներկայացուցչության ղեկավար Դրագանա Կոիչը:

«ԿԽՄԿ-ն ստուգում է, թե արդյոք այդ մարդկանց համար պայմաններ են ստեղծվել իրենց ընտանիքների հետ շփման համար: Մենք՝ որպես Կարմիր խաչի միջազգային կոմիտե, այցելում ենք այդ անձանց, այս գործունեության արդյունքում բոլոր տեղեկությունները, հարցերը փոխանցվում եւ քննարկվում են միայն երկկողմանի գաղտնի ձեւով համապատասխան կառույցների հետ»,- ասել է նա:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԲԵՌ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

Ռուսաստանի արտակարգ իրավիճակների նախարարությունը Հայաստան է առաքում 40 տոննա հումանիտար բեռ:

«Հումանիտար օգնությունն ուղղված է այն քաղաքացիներին, որոնք հարկադրված լքել են Լեռնային Ղարաբաղի տարածքը», - նշված է Telegram-ում հրապարակված հաղորդագրությունում: Նշվում է, որ ՌԴ ԱԻՆ-ի «Իլ-76» ինքնաթիռը «Ժուկովսկի» օդանավակայանից մեկնել է Երեւանի օդանավակայան: «Օգնությունը կազմակերպվել է Ռուսաստանի նախագահի հանձնարարությամբ եւ ՌԴ կառավարության պատվերով», - հայտնել են ՌԴ ԱԻՆ-ում: Հումանիտար օգնությունը ներառում է սննդամթերք, ծածկոցներ, շարժական էլեկտրակայան:

ՄԵՏՐՈՅԻ ԿԱՅԱՆԸ ՓՈՐՁԱՔՆՆՎՈՒՄ Է

Երեւանի մետրոպոլիտենի Աջափնյակ կայարանի նախագիծն ամբողջապես պատրաստ է, այն այժմ անցնում է փորձաքննությունների փուլը:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ Երեւանի ավագանու նիստի ժամանակ հայտնեց քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

«Երեւանի մետրոպոլիտենի Աջափնյակ կայարանի նախագիծն ամբողջապես պատրաստ է, այն այժմ անցնում է փորձաքննությունների փուլը:

Այն բոլոր քննարկումները, որոնք վերաբերել են մետրոյի Աջափնյակ կայարանին, վերջապես արդեն մոտենում են իրականացման փուլին»,-նշեց Ավինյանը:

ԱՊՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԸ՝ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԱԹՈՌԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, որ Արթուր Մկրտչյանը մեղադրվում է այն բանի համար, որ 2022 թվականի օգոստոսի 23-ից զբաղեցնելով «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի տնտեսագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատարի պաշտոնը, հանդիսանալով պետության կողմից ստեղծված հիմնադրամի անունից իրավունք, պարտականություն եւ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, իր ծառայողական լիազորություններով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, նույն հիմնադրամի ուսանողներ Ռոբերտ Չախոյանի, Սոնա Սարգսյանի եւ Հակոբ Վարդանյանի օգտին ապօրինի գործողություն կատարելու դիմաց վերջիններից պահանջել եւ ստացել է մաներ չափերով՝ ընդհանուր 450.000 ՀՀ դրամ կաշառք:

Արթուր Հովհաննեսի Մկրտչյանը 2022 թվականի օգոստոսի 23-ին, «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ամբիոնի ռեկտորի թիվ 90 հրամանի համաձայն, նշանակվել է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Տնտեսագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար եւ, նույն համալսարանի կանոնադրության համաձայն, հանդիսացել է պաշտոնատար անձ: «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ամբիոնի ռեկտորի՝ 2023 թվականի ապրիլի 27-ի թիվ 137 հրամանի համաձայն՝ Արթուր Մկրտչյանը ընդգրկված է եղել «Կառավարում», «Հաշվապահական հաշվառում եւ հարկում», «Շուկայագիտություն՝ ըստ ոլորտի» մասնագիտությունների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովում:

2021 թվականին Ռոբերտ Չախոյանը ընդունվել է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Կառավարում» մասնագիտության բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մագիստրատուրա՝2 տարի առկա ուսուցմամբ: Աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով ինչպես Ռոբերտ Չախոյանը, այնպես էլ վերջինիս համակուրսեցիներ Սոնա Սամվելի Սարգսյանը եւ Հակոբ Գագիկի Վարդանյանը լիարժեք չեն մասնակցել բոլոր դասընթացներին, որի հետեւանքով չեն կարողացել գրել մագիստրոսական թեզը եւ պաշտպանել այն: Ռոբերտ Չախոյանը Սոնա Սարգսյանի եւ Հակոբ Վարդանյանի հետ նախապես քննարկելուց հետո նշված խնդիրը լուծելու նպատակով միայնակ մոտեցել է թեզի նախապաշտպանություն իրականացրած, հանձնաժողովի անդամ Արթուր Մկրտչյանին ու հայտնել, որ չի կարող գրել մագիստրոսական թեզը, առավել եւս անցնել նախապաշտպանություն եւ պաշտպանել այն, ուստի խնդրել է օգնել այդ հարցում: Արթուր Մկրտչյանը Ռոբերտ Չախոյանին օգտին ապօրինի գործողություն կատարելու համար, այն է՝ մագիստրոսական թեզը գրելու, ինչպես նաեւ հետագա նախապաշտպանությունն արագ եւ բարեհաջող անցկացնելու համար Ռոբերտ Չախոյանից պահանջել է 170.000 ՀՀ դրամ կաշառք, որից՝ 150.000 ՀՀ դրամը, մագիստրոսական թեզը գրելու նպատակով: Դրանից հետո Ռոբերտ Չախոյանը հայտնել է, որ նմանատիպ խնդիրներ ունեն նաեւ Սոնա Սարգսյանը եւ Հակոբ Վարդանյանը, որոնց եւս Արթուր Մկրտչյանը նույն պայմաններով համաձայնել է օգնել: Արթուր Մկրտչյանի հետ ձեռք բերված պայմանավորվածության եւ վերջինիս առաջարկի մասին Ռոբերտ Չախոյանը հայտնել է Սոնա Սարգսյանին եւ Հակոբ Վարդանյանին, որոնք համաձայնել են Արթուր Մկրտչյանի առաջարկի հետ: Մի քանի օր անց, ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, Արթուր Մկրտչյանը համալսարանում հանդիպել է Ռոբերտ Չախոյանին ու Հակոբ Վարդանյանին, որտեղ Ռոբերտ Չախոյանից առձեռն ստացել է 450.000 ՀՀ դրամ կաշառք: Արթուր Մկրտչյանը Ռոբերտ Գագիկի Չախոյանի մագիստրոսական թեման տրամադրել է էլեկտրոնային կրիչով, այնուհետեւ պարզ է դարձել, որ «Արտադրական մենեջմենթի հիմքերը» թեման գրված է եղել դեռեւս 2021 թվականին: 2023 թվականի հունիսի 3-ին Ռոբերտ Չախոյանը, ինչպես նաեւ Սոնա Սարգսյանն ու Հակոբ Վարդանյանը մագիստրոսական թեզը բարեհաջող են հանձնել եւ ստացել բարձր միավորներ:

ՊԱՐԶՎԵՑ

ԿԱՇԱՌՔԻ ՄԵՂԱԴՐԱՆՔՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության կողմից իրականացված միջոցառումների արդյունքում նախաձեռնված քրեական վարույթով փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության Արտաշատի տարածքային կենտրոնի սոցիալական աշխատանքի եւ զբաղվածության ծրագրերի բաժնի պետ Տ. Կ.-ն եւ նույն ծառայության նշանակման վարչության բաժիններից մեկի պետ Հ. Ս.-ն, իրենց լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կաշառք տվողի օգտին գործողություն կատարելու համար, ավագ սոցիալական աշխատող Լ. Մ.-ի հետ նախնական համաձայնությամբ բազմաթիվ նպաստառուներից պարբերաբար տարբեր չափերի կաշառք են ստացել:

Լ. Մ.-ն Տ. Կ.-ի հետ նախնական համաձայնությամբ եւ իր մտերիմ Է. Խ.-ի միջնորդությամբ 2023 թվականի հոկտեմբերի 29-ին Արարատի մարզի Մրգանուշ բնակավայրի բնակչի՝ պետական նպաստ ստանալու ժամկետը երկարաձգելու գործընթացն անխոչընդոտ կազմակերպելու համար նրանից որպես կաշառք ստացել է 30.000 ՀՀ դրամ:

Մրգանուշ բնակավայրի մեկ այլ բնակչի օգտին գործողություն կատարելու, այն է՝սոցիալապես անապահով ընտանիքների ցուցակում ընդգրկելու եւ պետական նպաստ տրամադրելու գործընթացը սահուն եւ անխոչընդոտ կազմակերպելու համար 2023 թվականի սեպտեմբերին նրանից որպես կաշառք ստացել է 35.000 ՀՀ դրամ:

Պարզվել է նաեւ, որ Տ. Կ.-ն եւ Լ. Մ.-ն 2023 թվականի հոկտեմբերին եւ նոյեմբերին Արարատի մարզի եւս երկու նպաստառուից որպես կաշառք ստացել են 50.000 եւ 35.000 ՀՀ դրամ:

Նախաքննությամբ նաեւ տվյալներ են ստացվել Լ. Մ.-ի հետ նախնական համաձայնությամբ մեկ այլ պաշտոնատար անձի՝Միասնական սոցիալական ծառայության նշանակման վարչության բաժիններից մեկի պետ Հ. Ս.-ի կողմից նպաստառուից կաշառք ստանալու վերաբերյալ: Մասնավորապես՝ 2023 թվականի հոկտեմբերի 31-ին Լ. Մ.-ն Արարատի մարզի բնակչին տարիքային աշխատանքային կենսաթոշակ ստացողների ցուցակում ընդգրկելու հարցը կարգավորելու դիմաց նրա ամուսնուց որպես կաշառք պահանջել եւ ստացել է 300.000 ՀՀ դրամ, որից 200.000 ՀՀ դրամը փոխանցել է բաժնի պետ Հ. Ս.-ին:

Նպաստառուներից կաշառք ստացած Տ. Կ.-ն, Հ. Ս.-ն եւ Լ.Մ.-ն, վերջիններիս կաշառք տված 5 անձինք եւ կաշառքի միջնորդություն կատարած Է. Խ.-ն ձերբակալվել են:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԱԽՈՅԱՆԸ՝ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ գործով նախաքննության ավարտ է հայտարարվել, եւ գործը ուղարկվել է դատարան: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, անձանց խմբի նկատմամբ քաղաքական հայացքներով պայմանավորված, տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ հնչեցրել է բռնություն գործադրելու հրապարակային կոչեր:

Արագած Ախոյանը կալանքի տակ է:

Նշենք, որ նա անցնում է եւս մի քանի քրեական գործերով, մասնավորապես՝ Արագած Անդրուշի Ախոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2022 թվականի ապրիլի 24-ին Երեւան քաղաքի Վրացյան 90 հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կենտրոնական բաժնի դիմաց, Ռոման Վալերիի Բաղդասարյանի եւ այլ ակտիվիստների նկատմամբ քաղաքական հայացքներով պայմանավորված, բռնություն գործադրելու հրապարակային կոչեր է հնչեցրել եւ բռնություն գործադրելը հրապարակայնորեն արդարացրել:

Արագած Անդրուշի Ապոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա փորձել է իշխանությունը զավթել բռնություն գործադրելու եւ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրությամբ չնախատեսված այլ եղանակով տիրանալ ՀՀ կառավարության լիազորություններին, սակայն հանցանքն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով: Նրա հետ Իսրայել Հակոբի Հակոբկոխյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա փորձել է իշխանությունը զավթել բռնություն գործադրելու եւ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով, ինչպես նաեւ ՀՀ սահմանադրությամբ չնախատեսված այլ եղանակով տիրանալ ՀՀ կառավարության լիազորություններին, սակայն հանցանքն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով: Արշակ Ալյոշայի Զաքարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա փորձել է իշխանությունը զավթել բռնություն գործադրելու եւ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով, ինչպես նաեւ ՀՀ սահմանադրությամբ չնախատեսված այլ եղանակով տիրանալ ՀՀ կառավարության լիազորություններին, սակայն հանցանքն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով:

Վահագն Ռուբենի Չախալյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա փորձել է իշխանությունը զավթել բռնություն գործադրելու եւ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով, ինչպես նաեւ ՀՀ սահմանադրությամբ չնախատեսված այլ եղանակով տիրանալ ՀՀ կառավարության լիազորություններին, սակայն հանցանքն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով: Տիգրան Կառլենի Չոբանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա փորձել է իշխանությունը զավթել բռնություն գործադրելու եւ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով, ինչպես նաեւ ՀՀ սահմանադրությամբ չնախատեսված այլ եղանակով տիրանալ ՀՀ կառավարության լիազորություններին, սակայն հանցանքն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով: Դատարանը այս գործերով դեռ որոշում չի կայացրել:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 21-ից 22-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 69 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՆԻՍՏԻՆ ՔՊ–Ն ՉՄԱՄՆԱԿՑԵՑ

Նոյեմբերի 21-ին նշանակված էր Բերդ համայնքի ավագանու նիստ, որի օրակարգի կարեւոր հարցերից մեկը «Վալլեքս գրուպ» ընկերությունների խմբի անդամ «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող Տավուշ-Խնձորուտ հանքային դաշտի տարածքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ հոկտեմբերի 26-ին համայնքում կայացած հանրային լսումների նկատմամբ ավագանու որոշում կայացնելն էր:

Համայնքի բնակիչները դեմ էին արտահայտվել երկրաբանական ուսումնասիրություններին: Բերդ համայնքի ավագանին ունի 21 անդամ, որից 11-ը՝ «Ջորավոր համայնք», 8-ը՝ «Քաղաքացիական պայմանագիր», 2-ը՝ «Արժանապատիվ սերունդ» խմբակցությունների անդամներ են:

Նոյեմբերի 21-ի ավագանու նիստին «Ջորավոր համայնք» խմբակցության 11 անդամներից 2-ը չեն մասնակցել հարգելի պատճառներով, քանի որ իրենց առողջական խնդիրների պատճառով գտնվել են Երեւանի բուժհիմնարկներում: Նիստի սկզբում ներկա չեն եղել նաեւ «Արժանապատիվ սերունդ» խմբակցության ավագանու երկու անդամները: ՔՊ խմբակցության բոլոր 8 անդամները նիստից բացակայել են:

Քվորում չլինելու պատճառով ավագանու նիստը հետաձգվել է կես ժամով, այդ ընդմիջումը տեւել է մեկ ժամ, որի ընթացքում «Արժանապատիվ սերունդ» խմբակցության երկու ավագանիներից մեկը ներկայացել է նիստին:

Այնուամենայնիվ, ավագանու նիստ անցկացնելու համար անհրաժեշտ քվորում չի եղել: ՔՊ խմբակցության բոլոր անդամները, առանց որեւէ բացատրության, նիստից բացակայել են, ինչը մտածելու տեղիք է տալիս: Հոկտեմբերի 26-ին՝ Բերդում կայացած հանրային լսումներից հետո, երբ համայնքը միակամ դեմ է արտահայտվել համայնքի տարածքում մետաղական հանքավայր բացելու նպատակով երկրաբանական հետազոտություններին, «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Սահակ Կարապետյանը, պատասխանելով այն հարցին, թե որն է լինելու իրենց հետագա անելիքը, ասել է, որ իրենք սպասելու են համայնքի ավագանու որոշմանը:

Հոկտեմբերի 26-ին Բերդի մշակույթի տանը կայացած հանրային լսումների վերաբերյալ համայնքի ավագանին պետք է որոշում ընդունի հանրային լսումներից հետո՝ առավելագույնը մեկ ամսվա ընթացքում, այսինքն՝ մինչեւ նոյեմբերի 26-ը, այլապես «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն կարող է դիմել կառավարություն եւ ստանալ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու թույլտվություն: Բերդ համայնքից տեղեկացա, որ ավագանու հաջորդ նիստը նշանակված է նոյեմբերի 23-ին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

84.6 ՄԼՆ ԵՎՐՈ՝ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ

Գերմանիան եւ Հայաստանը համագործակցության ուղղությամբ նոր ճանապարհ են բացում, Գերմանիայի կառավարությունը դրամաշնորհների եւ վարկերի տեսքով Հայաստանին կտրամադրի 84.6 մլն եվրոյի օժանդակություն:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ Երեւանում անցկացված հայ-գերմանական միջկառավարական երկօրյա բանակցությունների արդյունքներին նվիրված ասուլիսում այս մասին հայտարարեցին ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Տնտեսական զարգացման եւ համագործակցության նախարարության պետքարտուղար Նիլս Աննենը:

Հայաստանի Հանրապետության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունները ստորագրել են միջկառավարական բանակցություններին վերաբերող արձանագրություն: 2014 թվականից ի վեր՝ սրանք առաջին պաշտոնական բանակցություններն են: Բանակցությունների ընթացքում քննարկվել են բազմաթիվ հարցեր՝ տնտեսական զարգացման համագործակցության վերաբերյալ:

«Գերմանիայի Դաշնային Հանրապետության կողմից կտրամադրվի լրացուցիչ 84.6 մլն եվրոյի օժանդակություն՝ դրամաշնորհների եւ վարկերի տեսքով, որն ուղղված կլինի միջին մասնագիտական տեխնիկական կրթության, ինչպես նաեւ վերականգվող էներգետիկայի ոլորտում նոր ծրագրեր իրականացնելու համար»,- ասաց Քերոբյանը:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական զարգացման եւ համագործակցության նախարարության պետքարտուղար Նիլս Աննենը 2014թ.-ից ի վեր անցկացված առաջին միջկառավարական բանակցությունները որակեց բավականին արդյունավետ:

«Կարծում եմ, որ սա շատ հստակ ուղերձ է ամբողջ աշխարհին, որ Գերմանիան եւ Հայաստանը համագործակցության ուղղությամբ նոր ճանապարհ են բացում: Հայաստանը եւս մեկ անգամ փաստում է, որ հանձնառություն է ստանձնել դեպի ժողովրդավարություն, ժողովրդավարական հասարակություն»,- ասաց Նիլս Աննենը:

Հայաստանի եւ Գերմանիայի համագործակցությունը շարունակվելու է տնտեսության բազմաթիվ ոլորտներում, այդ թվում՝ միջին մասնագիտական կրթության: Գերմանիան փորձելու է ամրապնդել Հայաստանի մարզերի կարողությունները համապատասխան ծառայությունների տրամադրումը բարելավելու նպատակով: «Առանձին աջակցություն նախատեսված է Հայաստանի կառավարությանը՝ ընդունելու եւ ինտեգրելու Լեռնային Ղարաբաղից Հայաստան ժամանած բնակչությանը»,-ասաց Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական զարգացման եւ համագործակցության նախարարության պետքարտուղարը:

Նա նշեց նաեւ էներգետիկայի ոլորտում համագործակցության մասին, մասնավորապես՝ներդրումներ են արվելու վերականգնվող էներգետիկայի ուղղությամբ: Սա Հայաստանի Հանրապետությանը թույլ կտա նվազեցնել էլեկտրաէներգիայի գինը:

«Մեծ ուշադրություն ենք դարձնելու Հայաստանի էներգետիկ անկախության ամրապնդմանը, ինչը մեծապես ընդգծվել է մեր համագործակցության բանակցությունների տիրույթում»,- նշեց գերմանացի պաշտոնյան:

Ստորագրված համաձայնագրով նախատեսված գումարը նաեւ որպես վարկային միջոց Հայաստանի Հանրապետության բանկերի միջոցով տրամադրվելու է ընկերություններին:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանն ընդունել է գերմանական «Gerkan, Marg and Partners» ճարտարապետական կազմակերպության ներկայացուցիչներ Թոբիաս Քայելին եւ Յոհան Ռաբեին: Հանդիպմանը մասնակցել են «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի տնօրեն Արմեն Սիմոնյանը, հիմնադրամի փորձագետ-ճարտարապետ Աստղիկ Դանիելյանը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ քննարկվել են Ակադեմիական քաղաքի նախագծման աշխատանքների վերաբերյալ հարցեր: Մասնավորապես՝ անդրադարձ է կատարվել տեղադիրքին, գլխավոր հատակագծի մշակման աշխատանքներին:

Ճարտարապետական կազմակերպության մասնագետները ներկայացրել են կատարած վերլուծության արդյունքները, որի համար հիմք են ծառայել ինչպես նախատեսվող տարածքի վերաբերյալ տվյալները, այնպես էլ միջազգային փորձը: Հաշվի են առնվել մշակութային առանձնահատկությունները եւ տարածքի բնական լանդշաֆտային պայմանները: Կատարվել է նմանօրինակ համալիրների տարածքների ֆունկցիոնալ կազմակերպման եւ ծավալատարածական կառուցվածքների, նաեւ համաշխարհային հայտնի կառույցների եւ խոշորամասշտաբ օբյեկտների համեմատական վերլուծություն:

Մասնագետների խումբն ուսումնասիրել է ՀՀ գործող նորմատիվ իրավական փաստաթղթերը, կատարել տարածքների համամասնական վերլուծություն: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել տարածքի նկատմամբ հատակագծային սահմանափակումների գնահատմանը: Դիտարկվել են նաեւ Ակադեմիական քաղաքի կլաստերների միջեւ ֆունկցիոնալ կապերի ապահովմանը, ենթակառուցվածքների զարգացմանն առնչվող այլ հարցեր:

Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի հայեցակարգի մշակման աշխատանքները շարունակվում են ամբողջ ծավալով:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊՆ–Ն ՈՒ ՎՐԱՍՏԱՆԸ

Այցով Վրաստանում գտնվող Ադրբեջանի ՊՆ պատվիրակությունը հանդիպում է ունեցել Վրաստանի պաշտպանության փոխնախարար Գեորգի Խաինդրավայի հետ:

Ինչպես տեղեկացրել են ադրբեջանական ԶԼՄ-ները, ադրբեջանական պատվիրակության կազմում են պաշտպանության փոխնախարար - գլխավոր տնօրեն Ագիլ Գուրբանովը, պաշտպանության փոխնախարար - ՌՕՈՒ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ռամիզ Թահիրովը եւ այլ պաշտոնատար անձինք: Հանդիպման ժամանակ քննարկվել են երկու երկրների միջեւ ռազմական համագործակցության հեռանկարները:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 21 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 22-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

Գայանե Ալբերտի Ազարյանը 24.12.1983թ. ընդունվել է Հայկական պետական ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտ, ապա՝ 04.07.1989թ., նրան տրվել է N059850 դիպլոմ՝ «Մեթոդական միջոցառումների կազմակերպում եւ անցկացում» մասնագիտությամբ (տրման ամս.՝ 09.07.1989թ.): Հայտնաբերվել է Քանաքեռ-Զեյթուն 14-րդ փ., 44 շենք, 12 բն.:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ք. Երեւան, Աջափնյակ, Հաղթանակի 1-ին փողոց, 55 հասցեում գտնվող 1245.3 ք.մ. անասնաշենք, 1203.2 ք.մ. անասնաշենք, 1921.3 ք.մ. անասնաշենք, 11.8 ք.մ. ենթակայան, 1816.2 ք.մ. մակերեսով ինքնակամ շինություններ եւ 4.95 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 520000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 11.12.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝01.07.2024թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ԵՐԱՋԱՆՔԻՑ՝ ԴԵՊԻ ՆՊԱՏԱԿ

Ազգային ավանդույթների ոգեհամամբ «Օհանյան Բրենդի Կոմպանի» ընկերությունը բնական մրգերից արտադրում է ալկոհոլային խմիչքներ:

«Օհանյան Բրենդի Կոմպանին» անկախ Հայաստանի առաջին ընտանեկան ընկերություններից մեկն է, հիմնադրվել է 1998թ.-ին՝ 1922թ.-ին Արցախում հիմնադրված գինու եւ կոնյակի կոմբինատի հիմքի վրա:

Արտադրության հիմնադիրը ցանկանում էր աշխարհին պատմել Արցախի մասին. արտադրությունը սկսեցին Արցախի խորհրդանիշ թթից եւ շարունակեցին արտադրել նաեւ այլ մրգային օղիներ: Ընկերությունում ստեղծվեց մրգային օղիների հնեցման յուրահատուկ տեխնոլոգիա՝ հատուկ բաղադրատոմսով:

2018թ.-ին գործարանը սկսեց կոնյակների արտադրությունը, ընդլայնվեցին կոնյակի եւ մրգային սպիրտների հնեցման մառանները:

2023թ.-ին «Օհանյան Բրենդի Կոմպանին» նոր գործարան բացեց Երեւանում եւ շարունակեց աշխատել: Հայաստանում սկսված արտադրության գործընկերը դարձավ «Ակբա Լիզինգ»-ը, որի աջակցությամբ գործարանը համալրվեց գերժամանակակից սարքավորումներով:

«Մեր ընկերությունն առաջնեկն է թունդ ալկոհոլային մրգային խմիչքների բնագավառում: Կարելի է ասել, որ մենք ենք լոկոմոտիվը եղել, որպեսզի Հայաստանում զարգանա թունդ ալկոհոլային մրգային խմիչքների արտադրությունը: Մեր մրգային խմիչքներն անվանվել են «Արցախ»: Մեր ունեցած տակառներն ամբողջությամբ արցախյան կաղնուց են, մեր արտադրամասում օգտագործում ենք բացառապես Արցախի կաղնին: Այն տալիս է հիանալի օրգանոլեպտիկ հատկություն: Մենք արդեն Հայաստանում հիմնել ենք խաղողի այգիներ, տեղափոխել ենք նաեւ նուռ, խնձոր, ծիրան... Ամեն ինչ, ինչ այնտեղից հնարավոր է եղել, տեղափոխել ենք, որպեսզի մայր հողի վրա ծիլեր տան, որ շարունակվի մեր պատմությունը: Երեւանի գործարանը հիմնադրվել է 2023թ.-ին եւ համալրված է ժամանակակից հոսքագծերով: Վերջին ներս ձեռք են բերվել «Ակբա Լիզինգ»-ի հետ համագործակցության շնորհիվ: Գործարանի հոսքագծերը նախատեսված են հատուկ մեր գործարանի համար, այդ իսկ պատճառով կարող ենք պարծենալ, որ ունենք գերժամանակակից հոսքագիծ: Գործարանը մտածում է նաեւ շրջակա միջավայրի մասին, դրա համար օգտագործվում են նորագույն տեխնոլոգիաներ, ինչպիսիք են արեւային կայանները, էլեկտրական ամբարձիչները, ձեռքի էլեկտրական քարշակները»,- նշել է «Օհանյան Բրենդի Կոմպանի» ընկերության տնօրեն Էդվարդ Աղումյանը:

Սփյուռքում մեծ ճանաչում ունի ընկերության արտադրած հայկական առաջին օրգանիկ ցորենի օղին: «Օհանյան Բրենդի Կոմպանի» ընկերության խմիչքներն արտահանվում են Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ճապոնիա, Չինաստան, Ռուսաստան ու եվրոպական երկրներ:

«Ակբա Լիզինգ»-ի 100% բաժնետերն «Ակբա» բանկն է:

ԼԻԱՋՈՐԵԼ ԵՆ

ԹՈՇԱԿՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՍՏՆԵՐԸ՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Կառավարությանը վերապահվել է լիազորություն իրականացնել ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կենսաթոշակների եւ նպաստների նշանակման ու վճարման գործընթացները՝ սահմանելով դրանց առանձնահատկությունները: Ազգային ժողովը 87 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայնով երեկ ընդունել է «Պետական կենսաթոշակների մասին» ու «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը:

ԱՍՀ նախարարությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ, ըստ այդմ, նախատեսվում է ՀՀ-ում կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժում հաշվառել Լեռնային Ղարաբաղի տարածքում ձեռք բերված աշխատանքային եւ այլ գործունեության, զինվորական ծառայության ժամանակահատվածները. կսահմանվեն նաեւ Լեռնային Ղարաբաղի տարածքում ձեռք բերած աշխատանքային ստաժը հաշվարկելու կանոնները:

Կառավարությանը վերապահվում է նաեւ փախստականի կարգավիճակ ունեցող անձանց՝ կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելու եւ կենսաթոշակի գործ վարելու կարգի առանձնահատկությունները սահմանելու լիազորությունը: Այսինքն՝ այս դեպքում հնարավորություն կտրվի Լեռնային Ղարաբաղում նշանակված կենսաթոշակները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակել՝ առցանց դիմումի հիման վրա, առանց ստաժը վերահաշվարկելու:

Փոփոխությունները հնարավորություն կտան կարգավորել նաեւ Լեռնային Ղարաբաղի պաշտպանության, ոստիկանության, փրկարար ծառայության, ազգային անվտանգության ծառայության համակարգերում ծառայած անձի, քրեակատարողական ծառայողի եւ դատական ակտերի հարկադիր կատարողի զինվորական կենսաթոշակի իրավունքի իրացմանն առնչվող ընթացակարգերը: ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց զինպարգեւավճարներ եւ պատվովճարներ նշանակելու համար անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություններ նաեւ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում, որի կարգավորումը եւս ներառված է նախագծերի փաթեթում:

Հավելենք, որ օրենքով կառավարությանը տրված լիազորությունների շրջանակում կհստակեցվեն եւ կպարզեցվեն նաեւ երեխայի ծննդյան միանվագ ու խնամքի նպաստների, ինչպես նաեւ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների իրավունքի իրացման ընթացակարգերը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՊԱՏԱՐԱԳ

ԱՐՑԱԽԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Սեպտեմբերի 19-ի ագրեսիայի եւ դրան հաջորդած տեղահանումից հետո Արցախի թեմը շարունակում է պահպանել իր կարգավիճակը եւ գործում է՝ համաձայն եկեղեցական-կանոնական սկզբունքների:

Արցախի թեմի հոգեւոր սպասավորների մի մասը հոգեւոր ծառայությունը շարունակում է Հայաստանի Հանրապետությունում:

Տեր Մինաս քահանա Մովսիսյանը նախքան սեպտեմբերյան ագրեսիան Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցու հոգեւոր հովիվն էր:

«Ժողովուրդ» օրաթերթը հեռախոսազրույց է ունեցել հոգեւորականի հետ.

-Որտե՞ղ եք շարունակում հոգեւոր ծառայությունը:

-Այժմ հոգեւոր գործունեությունը ծավալում եմ Կոտայքի մարզի Սոլակ գյուղում՝ որպես հոգեւոր պատասխանատու: Նշանակվել եմ Կոտայքի թեմի առաջնորդի կողմից:

-Ի՞նչ եք կարծում, սեպտեմբերի 19-ի ագրեսիայի եւ դրան հաջորդած՝ վառելիքի պահեստում տեղի ունեցած պայթյունից հետո տեղին չէ՞ր սգո օր հայտարարելը:

-Վերջին սարսափելի դեպքերի պատճառով մեր շատ եղբայրներ եւ քույրեր զոհվեցին, որը մեծ ցավ պատճառեց մեր հայ ժողովրդին: Իհարկե, կարելի էր սուգ հայտարարել, որովհետեւ դա մի սարսափելի կորուստ էր, սարսափելի դեպք էր, որին զոհ գնացին անմեղ մեր զավակները, եւ չի կարելի դրա նկատմամբ անտարբեր լինել: Պետք էր համաժողովրդական ցավ, սուգ հայտարարել, որպեսզի բոլորս մասնակից լինենք այդ ցավին, սուգին եւ աղոթքին: Մեր Առաքելական եկեղեցին իր առաքելությունը, հոգեւոր պարտքը կատարեց հոգեհանգստյան արարողություններով»:

-Հոգեւոր պատարագ մատուցո՞ւմ եք:

-Անցած կիրակի Սոլակ գյուղում անդրանիկ պատարագը մատուցեցի: Դա իմ առաջին սուրբ արարողությունն էր, պատարագն էր: Մասնակցողներ շատ եղան: Պատարագին մասնակցեցին գյուղից եւ տարբեր տեղերից եկած հավատացյալ մեր քույրեր եւ եղբայրները: Աղոթեցինք այս դժվարությունների հաղթահարման համար, աղոթեցինք մեր զոհերի եւ նահատակների համար: Դրանով մեր հոգեւոր գործունեության սկիզբը դրեցինք:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների հետեւանքով Արցախում առկա խնդիրներին ավելացել էին նորերը: Կտրվել էր կապը շրջանների հետ, թշնամին վերահսկում էր միջշրջանային ավտոճանապարհների մի մասը: Սկսվեց բնակչության տարհանումը Հայաստանի Հանրապետություն:

ՀԱՂԹԱՆԱԿ

ՓՈՔՐԻԿ ԱՐՑԱԽՑՈՒ ԽՂՁԵՐԸ

«Ստեփանակերտից ինձ հետ բերել եմ միայն դասվոգրերս ու զավաքներս»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասում է Արցախից բռնի տեղահանված Հայկ Սարգսյանը:

Հայկ Սարգսյանն ինը տարեկան հասակից սկսեց հաճախել Սամբոյի ուշու մարզաձեւին եւ սիրեց ու նվիրվեց մարզաձեւի կանոնակարգին: Երեք տարի առաջ հորաքրոջ տղան առաջարկեց գնալ մարզադահլիճ, որն էլ պատճառ դարձավ Հայկի՝ սամբոյին տրվելուն:

«Հետեւեցի եղբորս պարապմունքներին, եւ ինձ դուր եկավ: Դիմեցի մարզչին, եւ նա ինձ նոր խմբի հետ ընդունեց: Երկար էի պարապում, լինում էր՝ անգամ արտաժամյա կամ տան պայմաններում էի պարապում: Չարչարանքերս արդյունք տվեցին. մարզիչս որոշեց ինձ ուղարկել մրցումների: Առաջին անգամ մասնակցել եմ Արցախի Հանրապետության հավատի խաղարկության մրցաշարին եւ նվաճել եմ մրցաշարի գավաթը: Այս նվաճումն ինձ մեծ ոգեւորություն տվեց: Մասնակցել եմ Արցախի Հանրապետության ուշուի բաց առաջնությանը եւ գրավել առաջին տեղը, ինչպես նաեւ openArmenia kung fu մրցաշարին՝ զբաղեցնելով 2-րդ տեղը»,-պատմում է Հայկը:

12-ամյա Հայկը 2023թ. սեպտեմբերյան վերջին իրադարձություններից հետո ապրում է Աշտարակում ընտանիքի հետ: Հայրը, առողջական խնդիրներից ելնելով, հիվանդանոցում է, իսկ մայրը, խնամելով հորը, փորձում է զուգահեռաբար աշխատանք գտնել:

«Մարզիչս Երեւանում վերաբացել եւ շարունակում է պարապմունքները: Պարապմունքներին հաճախել չեմ կարողանում, իսկ Աշտարակում ուշուի խմբակ չի գործում: Շատ կցանկանայի շարունակել պարապմունքներս մարզչիս հետ, բայց այս պահին մայրս այդ հնարավորությունը չունի, իսկ հայրս հիվանդանոցում է: Սպասում եմ՝ մինչեւ հայրս կազդուրվի, որ կարողանամ պարապմունքների գնամ»,-ասում է մեր զրուցակիցը:

Հայկը երազանքներ ու նպատակներ շատ ունի, ասում է, որ ձգտելու է բոլորին հասնել. «Երազանքս է դառնալ աշխարհի չեմպիոն, բարձրացնել Արցախի դրոշը եւ հաղթանակած վերադառնալ Արցախ, որտեղ ինձ կդիմավորեն դափնեպսակով մեր «Տատիկ-պապիկի» («Մենք ենք մեր սարերը» հուշակոթող) մոտ»:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԳՐԱՌՈՒՄ Է ԱՐԵԼ

Նոյեմբերի 15-ին Մեքսիկայի Գվադալախարա քաղաքում մեկնարկեց ծանրամարտի երիտասարդների աշխարհի առաջնությունը: Հայաստանի ընտրանին առաջնությանը մասնակցում էր 7 մարզիկով: Գվադալախարա էին մեկնել Գոռ Սահակյանը (67 կգ), Մարտին Պողոսյանը (73 կգ), Սուրեն Գրիգորյանը (89 կգ), Գարիկ Կարապետյանը (102 կգ), Ալեքսանդրա Գրիգորյանը (55 կգ), Անա Ամրոյանը (76 կգ), Էմմա Պողոսյանը (81 կգ): Տղամարդկանց 67 կգ քաշային կարգում Սահակյանը, «Պոկում» վարժություն գլխավերեւում պահելով 140 կգ, փոքր ոսկե մեդալակիր դարձավ: Երկամարտի 305 կգ արդյունքով Գոռ Սահակյանը դարձավ երիտասարդների աշխարհի առաջնության չեմպիոն: Ծանրորդը ֆեյսբուքյան իր էջում անդրադարձ է կատարել իր հաղթանակներին. «Այս տարին եւս սկսեցի եւ ավարտեցի հաղթանակով:

Երբեմն հաղթելու չափազանց մեծ ցանկությունը լարվածություն է առաջացնում: Բազում դժվարություններ հաղթահարելով՝ համառ աշխատանքով ավելի մոտեցա իմ նպատակին:

Աստծո օգնությունն ինձ հետ է միշտ, ես դա զգում եմ ու յուրաքանչյուր մրցման մեկնում եմ այն գիտակցությամբ, որ դա իմ հնարավորությունն է, որ պարտավոր եմ հաղթել: Երախտապարտ եմ ծնողներիս, որ իրենց սիրով ու հոգատարությամբ կողքիս էին, մարզիչներիս, որ հավատացին, վստահեցին ու չխնայեցին իրենց ջանքն ու փորձառությունը: Շնորհակալ եմ բոլոր այն մարդկանց, որոնք հավատում ու ոգեւորում էին ինձ»,- գրել է Գոռը:

Հիշեցնենք, որ ապրիլին Երեւանում ընթացող ծանրամարտի Եվրոպայի առաջնությունում Հայաստանին առաջին ոսկին բերել է հենց Գոռ Սահակյանը: Երկամարտում 19-ամյա Գոռ Սահակյանը գրանցեց 320 կգ արդյունք՝դառնալով Եվրոպայի չեմպիոն: 67 կգ քաշային կարգի «Պոկում» վարժությունում նա բարձրացրեց 140 կգ, ապա՝ 145 կգ: «Հրում» վարժությունում Գոռ Սահակյանը բարձրացրեց 170 կգ եւ 175 կգ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԻՋԵՑ

Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության ընտրական փուլի վերջին տուրի շրջանակներում Հայաստանի հավաքականը հյուրընկալվել էր Խորվաթիային:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ Զագրեբի «Մաքսիմիր» մարզադաշտում կայացած խաղի մեկնարկային 10 րոպեներին Խորվաթիայի ընտրանին ակնհայտ առավելություն ուներ եւ տիրում էր նախաձեռնությանը: Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմն էլ շեշտը դնում էր արագ հակագրոհների վրա, սակայն խորվաթները առավելությունը գոլի վերածեցին առաջին կեսի վերջնամասում: Խաղի 41-րդ րոպեին գլխի շեշտակի հարվածով աչքի ընկավ Անտե Բուդիմիրը: Երկրորդ կեսի հիմնական մասում եւս գնդակին տիրում էր Խորվաթիան, Հայաստանի ազգային թիմի դարպասապահ Չանչարեւիչը մի քանի դրվագներում փրկեց թիմին վերահաս գոլից: Խորվաթիա-Հայաստան՝ 1:0: Խորվաթիան այս հաղթանակի շնորհիվ մրցաշարային աղյուսակում զբաղեցրեց երկրորդ հորիզոնականը եւ դուրս եկավ Եվրոպայի առաջնության ընտրական փուլ:

● *Նոյեմբերի 24-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Կուկարաչա» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ամենաաբսուրդը ինչքա՞ն կարող է ավելանալ ապահովագրավճարը, եւ ո՞ր դեպքերում:

Սարգիս Խաչատրյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ձեր ապահովագրավճարը առավելագույնը կարող է եռապատկվել, ընդ որում՝ դա կարող է տեղի ունենալ բացառիկ դեպքերում՝ էականորեն վատ ապահովագրական պատմություն (այնպիսի ԱՊՊԱ պատահարներում ներգրավվել, որի հետեւանքով իր կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագրի շրջանակներում տրվել է հատուցում երրորդ անձին՝ այդպիսի յուրաքանչյուր դեպքի համար ստանալով մալուս՝ կախված այդ հատուցման գումարի չափից) վաստակելու դեպքում:

Ենթադրենք՝ ԱՊՊԱ համակարգ նոր մուտք գործած սպառողը մեկ տարվա ընթացքում ունեցել է երկու պատահարի գծով մեղավորություն, որոնցից յուրաքանչյուրի հատուցումը մեկ միլիոն ՀՀ դրամից ավել է, ապա այդ սպառողի ապահովագրավճարը կեռապատկվի:

Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մեկ տարվա ընթացքում ապահովագրավճարը կարող է եռապատկվել անգամ, երբ փոխհատուցված գումարի չափը չի գերազանցում մեկ միլիոն ՀՀ դրամը այն դեպքում, երբ սպառողը նվազագույնը երեք պատահար ունենա իր մեղավորությամբ, որոնցից գոնե երկուսը կլինեն 200.000-500.000 ՀՀ դրամի սահմաններում, մյուսը՝ 100.000-200.000 ՀՀ դրամի սահմաններում:

ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՐՑ. Ի՞նչ առաջադրանքներ են ընդգրկվում վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայությունում թափուր տեղ զբաղեցնելու համար անցկացվող թեստերում:

Աշխեն Հարությունյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մրցույթի թեստերում ընդգրկվում են մասնագիտական գիտելիքների եւ կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքներ: Թեստը բաղկացած է 50 թեստային առաջադրանքից: Մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, տվյալ ոլորտը եւ քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթների իրականացումը կանոնակարգող սահմանադրական օրենքներից, օրենքներից, օրենսգրքերից եւ տվյալ պաշտոնի գործառույթների իրականացման համար հենք հանդիսացող բազային գիտելիքների շրջանակից՝ հիմք ընդունելով տվյալ մարմնի գործունեության հիմնական ոլորտները եւ տվյալ պաշտոնի առանձնահատկությունները:

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմվում են՝ հիմք ընդունելով տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված ընդհանրական եւ ընտրանքային կոմպետենցիաները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Մի խումբ անձինք Երեւան քաղաքի Նորքի Այգիներ փողոցում գտնվող երկհարկանի տանը ստեղծել են թմրամիջոցների պատրաստման գաղտնի լաբորատորիա: Այս մասին զեկուցագիր է ստացվել ՀՀ ՆԳՆ ոստիկանության կենտրոնական բաժնից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 - 7 + 3 + 5
Կոտայքի լեռներ	- 3 - 7 + 2 + 6
Կոտայքի նախալեռներ	- 1 + 2 + 5 + 8
Գեղարքունիք	0 - 5 + 2 + 5
Լոռի	- 4 + 1 + 3 + 8
Տավուշ	- 1 + 3 + 5 + 9
Արագածոտնի լեռներ	- 2 - 6 0 + 3
Արագածոտնի նախալեռներ	+ 1 + 3 + 6 + 10

Արարատ	+ 2 + 5 + 10 + 13
Արմավիր	+ 3 + 6 + 11 + 13
Վայոց ձորի լեռներ	0 + 5 0 + 2
Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 8 + 11 + 3
Սյունիքի հովիտներ	+ 1 + 5 + 8 + 12
Սյունիքի նախալեռներ	0 - 4 + 2 + 6
ԼՂՀ	0 - 3 + 3 + 7
Երեւան	+ 2 + 4 + 9 + 11

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.11.2023**
Հասցեն՝ Գերաքրքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*